

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբեր, 2025 թվականի N 33-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ որոշում եմ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2025 թվականի դեկտեմբերի 25-ին՝ ժամը 11:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի տեսալսողական ծրագրերի թիվը և տեսալսողական հաղորդումների ընդհանուր ծավալը սահմանելու մասին հարցը:
2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի տեսալսողական ծրագրերի կառուցվածքը և դրանց առանձին բաժինների համամասնությունները հաստատելու մասին հարցը:
3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2026 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2026 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:

5. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Առաջինի միջազգային ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2026 թվականի հունվար եվ փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
6. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության «Առաջին ալիք Ամերիկա» տեսալսողական ծրագրի՝ 2026 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը հաստատելու մասին հարցը:
7. Տիգրան Վիրաբյանին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի տեղակալ-գլխավոր պրոդյուսերի պաշտոնից ազատելու մասին հարցը:
8. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի և դրամական հոսքերի նախահաշիվները հաստատելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

22 դեկտեմբեր, 2025 թվական
ք. Երևան